Խոզերի կլասիկ ժանտախտ

Խիստ կոնտագիոզ ինֆեկցիոն հիվանդություն է, որը բնորոշ է սեպտիցեմիայով և արյունահոսային ախտահարումներով: Երկրորդային ինֆեկցիայի արդյունքում ենթասուր և խրոնիկ ձևերը բարդանում են թոքերի կրուպոզ և հաստ աղիների լորձաթաղանթների կրուպոզ- դիֆթերիտիկ բորբոքումներով:

Հիվանդության նկատմամբ ընկալունակ են ընտանի խոզերի բոլոր ցեղերը, ինչպես նաև վայրի խոզերը: Ինֆեկցիայի տարածման կարևոր ուղիներից է համարվում հիվանդ խոզերի սպանդային մթերքների օգտագործումը չվարակազերծված վիճակում:

Հիվանդության համաճարակային բռնկումները կախված են վիրուսի ակտիվությունից և խոզերի վարակամերժման վիճակից: Ժանտախտի ստացիոնար անապահովությունը պայմանավորված է խոզերի ավելի քան 3 ամիս տևող վիրուսակրությամբ: Համաճարակի ինտենսիվությունը հասնում է 95-100%-ի, իսկ անկումները՝ 60-100%-ի: Հիվանդության սուր ընթացքի դեպքում մարմնի ջերմությունը բարձրանում է 41.5-42^{0}C, այնուհետև 3-5 օր տևող ընդհանուր նշաններից հետո ականջների և որովայնի մաշկի վրա գոյանում են կետային և ավելի խոշոր արյունազեղումներ, զարգանում է լեյկոցիտոզ, հազ, թուլություն, հյուծվածություն: Ախտաբանա- անատոմիական փոփոխություններն արտահայտվում են լորձաթաղանթների, շճաթաղանթների և երիկամների արյունազեղումներով: Փայծախը մեծացած է: Ակնհայտ են միզապարկի, կոկորդի և հատկապես մակկոկորդի լորձաթաղանթների արյունազեղումներ:

Խրոնիկ ընթացքի դեպքում բնորոշ են տարբեր մեծության բուտոնների առաջացումը հաստ աղիքի լորձաթաղանթների վրա:Հիվանդությունն ախտորոշելուց հետո սահմանում են կարանտին, իրականացնում են ժանտախտի վերացման խիստ միոցառումներ: Բոլոր հիվանդներին ու հիվանդության մեջ կասկածվողներին մեկուսացնում են ու ենթարկում սպանդի:

Սպանդային մթերքները վարակազերծում են անասնաբուժասանիտարական նորմերով, սահմանված կարգի համաձայն: Վարակի մեջ կասկածվող կենդանիներին ենթարկում են վակցինացման: Վակցինական կանխարգելումն իրականացնում են ժանտախտի անմիջական սպառնալիքի, կենդանիների վերախմբավորումների, սպանդանոցային և խոհանոցային մնացորդներով խոզերին կերակրման դեպքերում, մսի վերամշակման ձեռնարկությունների սահմանակից տնտեսություններում, խոզերի ժանտախտի նկատմամբ անապահով տնտեսություններին սահմանակից խոզաբուծական տնտեսություններում, այն գոտիներում, որտեղ երեք տարի շարունակ դիտվել է վայրի խոզերի ժանտախտ, այն տնտեսություններում, որոնց տարածքում գտնվող խոզաբուծական ֆերմաներում կատարում են հակաժանտախտային վակցինացիա: